## Դ. Հ. ԼՈՐԵՆՍ

## ԱՐԵՎ

### 1.

– Արև է պետք նրան, տարե՛ք արևոտ երկիր,- ասաց բժիշկը:

Կինն այնքան էլ չէր հավատում, որ արևն իրեն օգուտ կտա, բայց թույլ տվեց, որ իրեն, երեխային, դայակին ու մորը տանեն ծովափնյա երկիր:

Նավը ճանապարհ էր ընկնելու կեսգիշերին: Ուստի ամուսինը երկու ժամ մնաց կնոջ մոտ, մինչև երեխային պառկեցրին քնելու, և մյուս ուղևորները նավ բարձրացան: Խավար գիշեր էր, և այդ խավարում գալարվում էր Հուդզոն գետը, որի գրկում, մեկ այստեղ, մեկ այնտեղ լույսի ցոլքեր էին երևում: Բազրիքին հենված՝ կինը դիտում էր խավարը ու մտածում. «Սա է ծովը: Անասելի խոր ու հուշերով լի»: Այդ պահին գետը գալարվում էր հավերժական քաոսի օձի նման:

Կողքին կանգնած ամուսինն ասաց,

– Գիտես ինչ, այս բաժանումներից ոչ մի օգուտ չկա, ոչ մի օգուտ: Սրտովս չեն:

Ամուսնու ձայնի մեջ մի տեսակ վիատություն կար, տագնապ: Զգացվում էր, որ նա վերջին հույսով փրփուրներին է կառչում:

– Իմ սրտով էլ չեն,- առանց որևէ հույզի պատասխանեց կինը:

Կինը հիշեց, թե ինչքան էին ուզում հեռանալ միմյանցից ինքն ու ամուսինը: Բաժանումը թեթևակի խռովք առաջացրեց կնոջ սրտում, սակայն դրանից սիրտն ավելի խոցվեց այն սառնությունից, որ սայրի պես մխրճվել էր հոգու մեջ:

Ամուսինները նայում էին քնած որդուն, և հոր աչքերը թրջվեցին: Բայց թաց աչքերը կարևոր չեն, կարևոր է արմատացած սովորույթի անկասելի ռիթմը, տարիների, ողջ կյանքի ընթացքում արմատացած, հոգում բույն դրած կենսական ռիթմը:

Իսկ նրանց երկուսի ներսում այդ ռիթմը թշնամական էր: Նրանք նման էին երկու շարժիչների, որոնք փշուր-փշուր էին անում միմյանց, քանի որ ներդաշնակ չէին շարժվում:

– Բոլոր ճանապարհողներն իջնեն, բոլորն ափ իջնեն:

– Մորիս, գնալու ժամանակն է,- ասաց կինը և ինքն իր մեջ մտածեց. «Նրա համար ափ իջնել է, ինձ համար՝ ծով դուրս գալ»:

Կեսգիշերային անդորրում նավամատույցին կանգնած ամուսինը թափահարում էր թաշկինակը, մինչ նավն աննկատ հեռանում էր ափից, բազմության մի մասնիկն էր նա, մի մասնիկ բազմությունից: Հենց այդպես, ուրիշ ոչինչ:

Հուդսոնի վրայով, մեծ սկուտեղների նման սահում էին լաստանավերը՝ հարկեհարկ լուսավորված պատուհաններով: Այդ սև խոռոչը պետք է որ Լաքավաննա կայարանը լինի:

Նավն առաջ էր ընթանում, իսկ Հուդսոնի վերջը չէր երևում: Վերջապես, ոլորանն անցնելուց հետո լույսերը նվազեցին, և կտրուկ վեր խոյացավ Ազատության արձանի ջահը: Առջևում ծովն էր ծփում:

Ատլանտյան օվկիանոսի լավայանման գորշությունից հետո կինը վերջապես հասավ արևոտ երկիր: Նա տուն ուներ, որ նայում էր ծովի կապույտին, ընդարձակ պարտեզով, թե խաղողի այգով. խաղողի վազերն ու ձիթենիները ձգվում էին դարավանդներով ներքև, դեպի նեղ ափեզրը. այգին լի էր կողմնակի աչքից հեռու գողտրիկ անկյուններով, փոքրիկ ծորակներում թաքնված կիտրոնի ծառախմբերով և զուլալ, կանաչին տվող լճակներով. այս ու այնտեղ որևէ ճեղքից աղբյուր էր ցայտում, որից սիկուլները՝ կղզու հին տեղաբնակները, օգտվել էին նախքան հույների հայտնվելը: Մի դատարկ հինավուրց դամբարանում գորշ այծ էր մկկում: Օդը հագեցած էր պատկառուկի բույրով, իսկ այգուց անդին ձյունածածկ հրաբուխն էր:

Կինը տեսնում էր այս ամենը և ինչ-որ չափով սփոփվում: Բայց այս ամենն իր մեջ չէր, արտաքին աշխարհն էր, որը նրան բոլորովին չէր հուզում: Նա ամփոփված էր ինքն իր մեջ, ներսում կուտակված բարկությամբ ու հուսախաբությամբ համակված, և անկարող որևէ իրական բան զգալու: Երեխան ազդում էր նյարդերի վրա, խախտում մտքի անդորրը: Կինն ահավոր, սոսկալի պատասխանատվություն էր զգում երեխայի համար, նրան թվում էր, թե պատասխանատու է երեխայի ամեն մի շնչի համար: Իսկ դա տառապանք էր պատճառում կնոջը, երեխային, բոլոր նրանց, ովքեր առնչվում էին կնոջ հետ:

– Գիտես չէ՞, Ջուլիետ, բժիշկը քեզ խորհուրդ է տվել պառկել արևի տակ բոլորովին մերկ: Ինչո՞ւ այդպես չես վարվում,-ասաց մայրը:

– Երբ ի վիճակի լինեմ, կանեմ: Ուզում ես ինձ սպանե՞լ, ինչ է,- վրդովված վրա բերեց կինը:

– Սպանե՞լ, իհարկե ոչ: Միայն քո օգտի համար:

– Ի սեր աստծո, վերջ տուր իմ օգտի համար անհանգստանալուդ:

Ի վերջո մայրն այնքան վիրավորվեց ու բարկացավ, որ մեկնեց:

Ծովն սկսեց սպիտակին տալ, հետո անէացավ: Հորդ անձրև սկսվեց: Արևի համար կառուցված տանը ցուրտ էր:

Հետո նորից լույսը բացվեց, և ծովեզրին ցոլալով վեր ելավ Արևը՝ մերկ ու բոսոր: Տունը նայում էր դեպի հարավ-արևմուտք: Անկողնում պառկած՝ Ջուլիետը դիտում էր, թե ինչպես է Արևը ծագում: Թվում էր, թե կինը երբեք արևածագ չէր տեսել նախկինում: Չէր տեսել, թե ինչպես է մերկ Արևը ոտքի ելնում ծովեզրի վրա, ուսերից վայր նետելով գիշերվա թաց թիկնոցը:

Ու կնոջ մեջ մի գողունի ցանկություն առաջացավ՝ Արևի տակ մերկանալու ցանկություն, որ միայն նրա գաղտնիքն էր:

Նա ուզում էր հեռանալ տնից, մարդկանցից: Իսկ աչքից հեռու լինելն այնքան էլ հեշտ չէր մի վայրում, որտեղ յուրաքանչյուր ձիթենի աչքեր ուներ, յուրաքանչյուր իջվածք երևում էր հեռվից:

Ի վերջո մի անկյուն գտավ՝ ժայռի ետևում, ծովի և Արևի մեջ մխրճված, մի հսկայական կակտուսով պատսպարված: Կակտուսի այս գորշակապտավուն ապաստարանից բարձրանում էր միայնակ մի նոճի՝ գունատ, հաստ բնով և երկնի կապույտում թեթևակի խոնարված ճկուն գագաթով:

Նոճին նման էր ծովին նայող պահապանի կամ էլ արծաթավուն մոմի, որի հսկայական բոցը մթության պատնեշ էր դնում լույսի ճանապարհին. հողն իր խավարի հպարտ լեզվակն էր դուրս հանել:

Ջուլիետը նստեց նոճու տակ և հանեց հագուստը: Նրա շուրջը հսկա կակտուսն էր թավ անտառի նման՝ երկյուղ առաջացնող, բայց և գայթակղիչ: Նա նստեց և կուրծքն ուղղեց Արևին՝ նույնիսկ այդ պահին ցավից հոգոց հանելով, որ ստիպված է տառապելով հանձնվել Արևին:

Իսկ Արևն արշավում էր կապույտ երկնքում՝ երկրին ուղարկելով իր շողերը: Կինն զգաց ծովի մեղմ շունչը ստինքների վրա, որոնք, թվում էր, երբեք չէին հասունանալու: Բայց նա գրեթե չէր զգում Արևի հպումը: Նրա ստինքները նման էին այն մրգին, որ չհասունացած թառամում է:

Սակայն շուտով կինն զգաց, որ Արևն իր ներսում է, կրծքի մեջ, և ջերմ է սիրո նման, կաթի նման, մանկան թաթիկների նման: Վերջապես, վերջապես, ստինքները նմանվեցին արևակիզվող խաղողի երկար ողկույզների:

Կինը դուրս սահեց ներքնազգեստից և մերկանդամ պառկեց Արևի տակ: Ապա մատների արանքից նայեց վեր, Արևի տրոփող, կապույտ սկավառակին, որի եզրերը շողարձակում էին: Այդ հիասքանչ կապույտը տրոփում էր, շնչում և եզրերից սպիտակ բոց ճառագում, գիրկն էր

առնում կնոջ կուրծքը, դեմքը, կոկորդը, նրա անզգայացած որովայնը, ծնկները, ազդրերն ու ոտնաթաթերը:

Կինը պառկած էր փակ աչքերով, բայց վարդագույն բոցը ներս էր թափանցում կոպերից: Դա արդեն չափից դուրս էր: Նա ձգվեց և տերևներով ծածկեց աչքերը, հետո նորից պառկեց Արևի տակ՝ երկար սպիտակ դդմիկի նման, որը հասունանալով ոսկեգույն է դառնում:

Նա զգում էր, ինչպես է Արևը թափանցում ոսկորների մեջ, նույնիսկ ավելի խոր, հույզերի ու մտքերի մեջ: Նրա ներսում բույն դրած լարումն սկսեց տեղի տալ, խորախորհուրդ մտքերի հանգույցներն սկսեցին տարրալուծվել: Սկսում էր ներսից ջերմանալ: Շրջվելով՝ Արևի կողմը դարձրեց ուսերը, կոնքը, ազդրերը, նույնիսկ կրունկները, որպեսզի նրանք էլ տարրալուծվեն: Պառկել էր ապշած այն ամենից, որ կատարվում էր իր հետ: Նրա ուժասպառ, սառած սիրտը հալվում էր, հալվելով՝ անէանում:

Երբ հագնվեց, կրկին պառկեց և նայեց վեր, նոճուն, որի ճկուն գագաթը տարուբերվում էր զեփյուռից: Այդ ընթացքում զգում էր, թե ինչպես է Արևը շրջում երկնքում:

Տուն գնաց ասես մշուշի մեջ, հազիվ տեսնելով, թե ուր է գնում՝ Արևից կուրացած, Արևից մշուշված: Բայց այդ կուրությունը կնոջ համար բարիք էր, նրա մշուշված, ջերմ, ծանրացած, կիսագիտակից վիճակը՝ հարստություն:

«Մամա, մամ», երեխան վազեց նրա մոտ՝ ճռվողելով վախվորած թռչնակի նման՝ միշտ ձգտելով, որ մոր կողքին լինի: Կինը զարմանքով նկատեց, որ նիրհող սիրտն այլևս չի տագնապում սիրո տառապանքից: Երեխային գրկեց ու մտածեց. «Ինչո՞ւ է այսքան ծանր: Եթե Արևի տակ մնար, կթեթևանար ու կցատկոտեր»:

Մի ակնթարթ կնոջը բարկացրեց պարանոցին փարված մանկական թաթիկների հպումը: Նա ընկրկեց: Չէր ուզում, որ իրեն դիպչեն: Երեխային մեղմորեն իջեցրեց:

- Վազի՛ր, վազվզի՛ր Արևի տակ:

Տեղնուտեղը նա հանեց երեխայի հագուստը և մերկ երեխային իջեցրեց Արևից ջերմացած դարավանդին:

- Արևի տակ խաղա՛:

Երեխան մի պահ վախեցավ և քիչ էր մնում լաց լիներ: Բայց կինը մի նարինջ գլորեց կարմիր սալիկների վրայով, և փոքրիկը՝ դեռևս չձևավորված թմբլիկը, անհաստատ քայլերով գնաց նարնջի հետևից: Հետո վերցնելուն պես՝ վայր գցեց, երբ զգաց նարնջի տարօրինակ

հպումը մերկ մարմնին: Ետ նայեց մորը՝ նվայով ու լացակումած, վախեցած իր իսկ մերկությունից:

- Բե՛ր, նարինջը,- ասաց կինը՝ ապշած երեխայի երկյուղի նկատմամբ իր անտարբերությունից:- Տո՛ւր: Բե՛ր նարինջը մամային:

- Նա չպետք է նմանվի հորը,- ասաց ինքն իրեն:- Չպետք է մեծանա այն որդի նման, որը երբեք Արևի երես չի տեսել:

2

Կինն այնքան երկար ժամանակ էր մտածել երեխայի մասին՝ տառապելով պատասխանատվությունից, ասես, նրան ծնունդ տալով՝ պետք է կրեր նրա գոյության ծանրությունը: Նույնիսկ երբ երեխայի քթից հոսում էր, կնոջ ներսում տհաճ զգացողություն էր առաջանում, կարծես ասելիս լիներ. Տե՛ս, թե ինչ ես լույս աշխարհ բերել:

Այժմ ինչ-որ բան փոխվեց: Երեխան այլևս լարում չէր առաջացնում: Նա երեխային ազատեց իր կամքից, իր հոգսից, ու դրանից երեխան ծաղկի պես բացվեց:

Կնոջ մտքերը Արևի, նրա վեհության, նրա զուգընկերը դառնալու շուրջն էին պտտվում: Այժմ կնոջ կյանքը մի ողջ ծիսակատարություն էր դարձել: Լուսաբացից առաջ նա մշտապես պառկած դիտում էր, թե ինչպես է գորշությունը ոսկեզօծվում, ինչպես են ամպերը ծովեզրին իջնում: Նրան մեծագույն հրճվանք էր պատճառում Արևի մերկությունը, երբ վերջինս, ամբողջովին բոսորագույն, կապտասպիտակ բոց էր շողարձակում գունատ երկնքում:

Բայց երբեմն Արևը հայտնվում էր շիկնած, ինչպես մի հսկա ամաչկոտ էակ: Երբեմն էլ բարձրանում էր դանդաղ, ալ կարմիր՝ գայրացած հայացքով, դանդաղ հրելով մթությունը: Ժամանակ առ ժամանակ կինը չէր տեսնում նրան, մինչ նա շարժվում էր ամպերի ետևում, որոնք ոսկեգույն ու ալ կարմիր ցոլքեր էին ուղարկում ներքև:

Կնոջ բախտը բերում էր: Շաբաթներն անցնում էին, ու թեև լուսաբացը երբեմն ամպամած էր և օրը՝ գորշ, ոչ մի օր չէր անցնում առանց Արևի, թեև ձմեռ էր, օրերը հիմնականում պայծառ էին: Փոքրիկ վայրի գաֆրանը ծաղկում էր ու կապտին տալիս, նարգիզները կախում էին իրենց ձմեռային աստղագլխիկները:

Ամեն օր կինը գնում էր կակտուսով պատսպարված նոճու մոտ, դեղնավուն քարափը: Այժմ նա ճիշտ էր հագնվում՝ աղավնու փետուրներ հիշեցնող գորշ խալաթ և սանդալներ: Այս կերպ հագնվելը հնարավորություն էր ընձեռում ցանկացած խորշում վայրկենապես մերկանալ Արևի համար: Հենց որ հագնվում էր, դառնում էր գորշ ու անկատ:

Ամեն օր, առավոտից մինչև կեսօր, նա պառկում էր սլացիկ, արծաթավուն նոճու տակ մինչ բարեհաճ Արևն արշավում էր երկնքում: Կինն արդեն զգում էր Արևին մարմնի բոլոր բջիջներով, ոչ մի սառը ստվեր չէր մնացել նրա ներսում: Իսկ սիրտը, այդ անհանգիստ, լարված սիրտն անէացել էր որպես մի ծաղիկ, որի թերթիկները թափվում են Արևի տակ, և միայն հասուն սերմերն են մնում:

Կինը լավ էր ճանաչում Արևին՝ կապույտ, շիկացած, ճերմակին տվող բոցեղեն եզրերով, որը հուր էր ճառագում: Եվ թեև Արևը լուսավորում էր ողջ աշխարհը, նա կենտրոնանում էր կնոջ վրա, երբ վերջինս պառկում մերկանում էր իրեն ընդառաջ: Սա էր Արևի մեծագույն հրաշքը: Նա կարող էր շողալ միլիոնավոր մարդկանց համար, բայց և շարունակել լինել այն միակ ճառագող, փառահեղ Արևը, որը միմիայն կնոջ վրա էր սևեռվում:

Արևին ճանաչելու և այն համոզմունքի հետ, որ Արևն էլ իրեն է ճանաչում, բառիս տիեզերական, նյութեղեն առումով, կնոջը համակեց մեկուսանալու ցանկություն, արհարհանք բոլոր մարդ-արարածների նկատմամբ: Նրանք այնքան անիրական էին, այնքան չարևահարված, այնքան նման գերեզմանոցի որդերին:

Նույնիսկ գյուղացիները, որ էշերով անցնում էին հին քարքարոտ, նեղ ճանապարհով, այնքան ներքուստ արևահարված չէին, թեև արտաքուստ թխացած էին Արևից: Կար վախի աննշան, փխրուն, անգույն միջուկ՝ նման պատյանի մեջ մտած խխունջին, որտեղ մարդու հոգին սոսկում էր մահվան շնչից, սոսկում բնական կյանքի բոցից: Մարդ միշտ մի ներքին վախ ունի և չի համարձակվում լրիվ դուրս գալ իր պատյանից: Բոլոր տղամարդիկ այդպիսին են:

Ինչո՞ւ ընդունել տղամարդկանց գոյությունը:

Մարդկանց, տղամարդկանց հանդեպ ի հայտ եկած անտարբերությունը թույլ էր տալիս, որ կինն առանձնապես չզգուշանա մերկ տեսնվելուց: Նա ասել էր Մարինինային, որը նրա գնումներն էր կատարում գյուղում, որ բժիշկն իրեն արևային լոգանք է նշանակել: Այդքանով թող բավարարվեն:

Մարինինան վաթսունն անց կին էր, նիհար, բարձրահասակ, ուղիղ կեցվածքով, գանգուր մուգ գորշավույն սպիտակ մազերով և մուգ գորշ աչքերով, որոնցում հազարավոր տարիների իմաստնություն կար և ծիծաղ, որը դարավոր փորձի ուղեկիցն է: Ողբերգությունը պարզապես փորձի պակասն է:

- Պետք է որ գեղեցիկ զգացողություն առաջանա արևի տակ մերկ գտնվելուց,- ասաց Մարինինան, և նրա իմաստուն աչքերում ծիծաղ

կար, երբ ուշադիր զննեց կնոջը: Ջուլիան կարճ սանրվածք էր կրում, և նրա շիկահեր մազերը քունքերի մոտ գանգուր ամպիկների էին նման: Մարինինան իմաստուն կին էր, և նրա հիշողությունները խոր, հեռավոր արմատներ ունեին: Նա կրկին նայեց Ջուլիային:- Բայց դու ինքդ պետք է գեղեցիկ լինես, եթե չես ուզում վիրավորանք հասցնել Արևին: Ճիշտ չե՞մ ասում,- ասաց Մարինինան՝ անցյալից իմաստնացած կնոջը հատուկ անսովոր կտրուկ ծիծաղով:

- Ո՞վ գիտե, ես գեղեցիկ եմ, թե ոչ,- պատասխանեց Ջուլիան: Նա զգում էր, որ անկախ այն բանից, ինքը գեղեցիկ է, թե ոչ, Արևը գնահատում էր իրեն, որը նույն բանն էր:

Երբեմն, երբ Արևը չէր երևում, կեսօրին Ջուլիան կամացուկ իջնում էր քարերի վրայով, ացնում քարափի եզրով դեպի խոր ձորակը, որտեղ հավերժական գով ստվերում կիտրոնի ծառեր էին աճում, և լուռ, շտապով մի կողմ էր նետում խալաթը և լողում վճիտ, կանաչավուն խոր լճակներից մեկում, կիտրոնների կանաչ ստվերում և նկատում, որ մարմինը վարդագույն էր դարձել, իսկ վարդագույնն էլ իր հերթին ոսկեգույն էր դառնում: Նա այլ էակի էր նման: Նա այլ էակ էր դարձել:

Ու նա հիշում էր, որ հույներն ասում էին, որ չարևահարված մարմինը տհաճ է ու վատառողջ:

Նա սովորաբար մաշկը շփում էր ձիթենու յուղով և շրջում էր կիտրոնների ստվերում որոշ ժամանակ՝ կիտրոնի ծաղիկը պորտի վրա պահած, խնդմնդալով: Հնարավոր էր, որ գյուղացիներից որևէ մեկը տեսներ նրան այդ պահին: Բայց եթե նման բան պատահեր, ավելի շուտ գյուղացին կվախենար նրանից, քան ինքը՝ գյուղացուց: Կինը տեղյակ էր վախի այն խամրած միջուկից, որ բույն էր դրել հագուստի մեջ պատսպարված տղամարդկանց մարմիններում:

Կինը տեսնում էր այդ վախը նույնիսկ փոքրիկ որդու մեջ: Ինչպիսի անվստահությամբ էր որդին վերաբերվում մորը, երբ վերջինս ծիծաղում էր երեխայի վրա, մինչ դեմքը շողում էր Արևից: Կինն ստիպում էր, որ երեխան մերկ վազվզի Արևի տակ ամեն օր: Եվ հիմա երեխայի փոքրիկ մարմինը նույնպես վարդագույն երանգ էր ստացել, խիտ շեկ մազերի տակից երևում էր վարդագույն ճակատը, իսկ այտերը ալ կարմիր նուռ էին հիշեցնում արևահար նուրբ ոսկեգույն մաշկի վրա: Մանկիկը լավիկն էր և առողջ, և ծառաները, հիանալով նրա կարմիր այտերով, ոսկեգույն մարմնով, կապույտ աչքերով, նրան երկնային հրեշտակ էին անվանում:

Բայց երեխան անվստահություն էր ցուցաբերում մոր նկատմամբ, իսկ մայրը ծիծաղում էր նրա վրա: Տղայի խոշոր կապույտ աչքերում

մայրը տեսնում էր այն վախի, տագնապի աղբյուրը, այն խռովքը, որը, կնոջ կարծիքով, բույն է դրել բոլոր տղամարդկանց աչքերում: Կինը դա անվանում էր վախ Արևի հանդեպ:

- Նա վախենում է Արևից,- հաճախ ասում էր ինքն իրեն՝ նայելով երեխայի աչքերի խորքը:

Եվ երբ Ջուլիան դիտում էր, թե ինչպես էր փոքրիկը անհաստատ քայլերով շարժվում, այս ու այն կողմ թեքվելով, գլորվելով ու ոտքի կանգնելով, ճռվողելով թռչնակի նման, տեսնում էր, որ փոքրիկը լարվում էր ու ինքն իր մեջ պատսպարվում Արևից: Երեխայի հոգին նման էր պատյանի մեջ գտնվող խխունջի, որը թաքնվել էր սառը, խոնավ ճեղքում՝ ինքն իր մեջ: Եվ սա ստիպում էր կնոջը մտածել երեխայի հոր մասին: Որքա՜ն էր կինը տենչում, որ ամուսինն ընդառաջ գար իրեն, թոթափեր իր պատյանը՝ որևէ անխոհեմ արարք գործելով:

Ջուլիան որոշեց երեխային իր հետ տանել կակտուսի պատսպարանը՝ նոճու մոտ: Իհարկե հարկ կլիներ հետևել երեխային, որ փշերից հեռու մնար: Բայց այդտեղ երեխան կթոթափեր ներսից իրեն կաշկանդող փոքրիկ պատյանը: Այդ ճղճիմ քաղաքակիրթ վախն ի վերջո կանհետանար փոքրիկի ճակատից:

Ջուլիան գորգիկ փռեց գետնին և երեխային նստեցրեց: Հետո դուրս սահեց խալաթից և պառկեց երեխայի կողքին՝ հայացքը հառած գլխավերևի նոճու կատարին ու նրանից հեռու կապույտում սավառնող բազեին:

Փոքրիկը գորգի վրա խաղում էր քարերով: Երբ կանգնեց ու մի քանի անհաստատ քայլ արեց, գորգից հեռանալով, կինը նույնպես բարձրացավ, ապա նստեց: Երեխան շրջվեց, նայեց մորը: Մանկիկի կապույտ աչքերում մարտահրավեր նետող, ջերմ արտահայտություն կար, որ հատուկ է իսկական տղամարդուն: Նա գեղեցիկ էր՝ կարմրաթուշ, շիկահեր, ոսկեգույն մաշկով: Իրականում նրա մաշկը սպիտակ էր, բայց հիմա փայլատ ոսկի էր հիշեցնում:

– Զգուշացիր փշերից, թանկագինս,- ասաց Ջուլիան: «Փշերից», արձագանքեց փոքրիկը ճռվողյունով՝ ուսի վրայով կասկածանքով նայելով մորը, ասես նկարներում պատկերված մերկ քերովբե-հրեշտակ լիներ:

– Չար, ծակող փշեր են:

– Ծակող փշեր:

Մանկիկը, սանդալներ հագած տոտիկներով, անվստահ մեկ-երկու քայլ արեց քարերի վրա՝ կառչելով չորացած վայրի դաղձից:

Եվ երբ քիչ էր մնում ընկներ փշերի վրա, Ջուլիան կայծակի արագությամբ նետվեց դեպի երեխան ճիշտ ժամանակին: Նույնիսկ ինքը զարմացավ իր արագությունից: «Ոնց որ վայրի կատու լինեմ», մտածեց ինքն իրեն:

Ամեն օր, երբ Արևը շողում էր, Ջուլիան բերում էր երեխային նոճու մոտ:

– Արի՛,- ասում էր Ջուլիան:- Արի գնանք նոճու մոտ:

Եթե օրն ամպամած էր, ու քամի էր փչում, և Ջուլիան չէր իջնում փոքրիկ ձորակը, մանկիկն անդադար ճռվողում էր, «Նոճու մոտ, նոճու մոտ»:

Երեխան զգում էր ծառի կարոտը նույնքան, որքան մայրը:

Խնդիրը միայն արևային լոգանքը չէր, շատ ավելին էր: Կնոջ ներսում ինչ-որ բան էր հանդարտվել, փթթել, և կինն անձնատուր էր եղել: Նրա ներսում, ավելի խորքում, քան նրա կամքն ու գիտակցությունն էին, ինչ-որ խորհրդավոր ուժ կապել էր նրան Արևի հետ, և կնոջ խորքից ինչ-որ հոսք էր հորդում: Կնոջ անձը, նրա գիտակից մասը երկրորդական էր, երկրորդական անձ, գրեթե ականատես դիտորդ: Իրական Ջուլիան այս անըմբռնելի հոսքն էր, որ հորդում էր նրա մարմնի խորխորատներից դեպի Արևը:

Ջուլիան միշտ տիրապետել էր իրեն, քաջ գիտակցելով իր արարքները և միշտ կառչելով ինքնատիրապետման իր կարողությանը: Այժմ ներսում բոլորովին այլ կարողություն էր զգում, կարողություն, որ իրենից հզոր էր, որ հորդում էր ինքնին:

3.

Անսպասելիորեն փետրվարի վերջին շատ շոգ արեց: Թեթևակի զեփյուռի շնչից ծաղկած նշենուց վարդագույն ձյուն էր թափվում:

Ծաղկեցին կապույտ մետաքսե հողմածաղիկները, բողբոջեցին ու երկարեցին շրիգակները, իսկ ծովը կապույտ էր տերեփուկի նման:

Ջուլիային ոչինչ չէր մտահոգում: Հիմա օրվա մեծ մասը մանկիկն ու ինքն արևի տակ էին մերկ: Սա էր նրա միակ ցանկությունը: Երբեմն գնում էր ծովում լողալու, հաճախ շրջում էր արևով ողողված փոքրիկ ձորակներում և ոչ մեկի աչքին չէր երևում: Երբեմն տեսնում էր մի գյուղացու, որն անցնում էր էշով, գյուղացին էլ իրեն էր տեսնում: Բայց կինն այնքան հանդարտ ու բնական էր քայլում երեխայի հետ, և արևի բուժող կարողության հռչակը, կարողությունը, որ բուժում էր և՛ հոգին, և՛ մարմինը, արդեն այնքան էր տարածվել տեղի բնակիչների շրջանում, որ ոչ մեկին չէր հուզում կնոջ մերկությունը:

Մանկիկն ու մայրը ոտքից գլուխ ծածկված էին վարդա-ոսկեգույն արևայրուկով: «Ես ուրիշ եմ», ասում էր կինն ինքն իրեն՝ նայելով վարդա-ոսկեգույն ստինքներին ու ազդրերին:

Մանկիկը նույնպես ուրիշ էր, յուրատեսակ հանդարտությամբ, արևահարված, ինքնամոռաց մի էակ, որ հանգիստ խաղում էր, և հարկ չկար, որ մայրը հետևեր նրան: Թվում էր, մանկիկն այլևս չէր նկատում, թե երբ էր մենակ լինում:

Ձեփյուռ չկար, ծովը գերկապույտ էր: Կինը, նստած, նոճու հաստ, արծաթավուն բնին հենված, ննջում էր Արևի տակ, բայց նրա ստինքները աչալուրջ էին, կենսահյութով լի: Նա զգում էր, որ ներսում ինչ-որ աշխուժություն է խլրտում, աշխուժություն, որ տանում էր նրան դեպի նոր կյանք: Սակայն կինը չէր ուզում գիտակցել դրա գոյությունը: Նա քաջ գիտեր, որ հնարավոր չէ խույս տալ քաղաքակրթության պաղ, անկենդան մեքենայից:

Մանկիկը փոքր-ինչ հեռացել էր քարքարոտ արահետով և շրջանցել մեծ լայնատարած կակտուսը: Կինը տեսել էր, որ նա՝ արևահար, դարչնա-ոսկեգույն փոքրիկը, արևախանձ ոսկեգույն մազերով ու վարդագույն այտերով, զանգակածաղիկներ էր հավաքում ու շարում իրար կողքի: Հիմա արդեն նրա քայլերը հաստատուն էին, ինքն էր իր կարիքները հոգում ու խաղում լուռ, ինքնամփոփ:

Հանկարծ մայրը լսեց փոքրիկի ձայնը, «Տե՛ս, մամ, տե՛ս»: Մանկիկի ճռվողուն ձայնի մեջ ինչ-որ բան ստիպեց մորը կտրուկ առաջ թեքվել:

Կնոջ սիրտը քար կտրեց: Մերկ փոքրիկը ուսի վրայով նայում էր մորը և փոքրիկ թաթիկն ուղղել էր դեպի օձը, որը մեկ մետր հեռավորության վրա բացել էր երախը, հանել երկսայր սև լեզուն և ֆշշացնում էր սպառնալից:

– Տե՛ս, մամ:

– Այո, թանկագինս, օձ է,- լսվեց մոր հանդարտ կրծքային ձայնը:

Փոքրիկը նայում էր մորը, իսկ կապույտ աչքերում հարց կար՝ վախենալ, թե՞ ոչ: Արևի հանդարտությունը կնոջը վստահություն ներշնչեց:

– Օձ,- ճռվողեց փոքրիկը:

– Այո, թանկագինս: Ձեռք չտա՛ս, կարող է խայթել:

Օձն իջեցրեց գլուխը և գալարները բացելով (այդ դիրքով էր նա քնած արևի տակ) սողաց, մտավ քարերի մեջ՝ դանդաղ սահեցնելով դարչնա-ոսկեգույն մարմինը: Փոքրիկը շրջվել ու հետևում էր օձին, հետո ասաց.

– Օձը գնում է:

– Այո, թող գնա: Նա սիրում է մենակ մնալ:

Փոքրիկը դեռ դիտում էր, թե ինչպես էր այդ երկար արարածը դանդաղ հեռանում:

– Օձն իր բույնը գնաց:

– Այո՛, գնաց: Արի՛ մամայի մոտ:

Փոքրիկը եկավ և տեղավորեց թմբլիկ, փոքրիկ, մերկ մարմինը մոր մերկ գրկում, իսկ մայրը շոյեց նրա արևախանձ, հրաշեկ մազերը: Մայրը ոչինչ չասաց՝ զգալով, որ վտանգն անցել է: Արևի անբացատրելի հանգստացնող ջերմությունը պարուրեց նրան, ողողեց հմայքով շուրջ բոլորը, իսկ օձն այդ վայրի մի մասնիկն էր, ինչպես ինքն ու իր փոքրիկը:

Մեկ ուրիշ անգամ ձիթենու դարավանդների չոր պատի վրա կինը մի սև օձ տեսավ, որը շարժվում էր պատի երկայնքով:

– Մարինինա, ես սև օձ եմ տեսել: Դրանք թունավո՞ր են:

– Սև օձերը՞, ոչ: Բայց դեղինները թունավոր են: Դեղինի խայթոցը մահացու է: Ես վախենում եմ օձերից, նույնիսկ սևերից: Երբ տեսնում եմ, վախենում եմ:

Ջուլիան շարունակում էր փոքրիկի հետ նոճու մոտ գնալ: Բայց միշտ ուշադիր շուրջն էր նայում նստելուց առաջ, զննում էր այն տեղանքը, ուր փոքրիկը կարող էր գնալ: Հետո պառկում էր, շրջվում արևի կողմը, նրա արևախանձ տանձանման ստինքները ուղղվում էին դեպի վեր: Նա չէր մտածում հաջորդ օրվա մասին: Նրա մտքերը հրաժարվում էին դուրս գալ այդ պարտեզից: Չէր կարողանում նամակ գրել, խնդրում էր, որ դայակը գրի:

4.

Մարտ ամիսն էր, Արևն ավելի էր ջերմացնում: Շոգ ժամերին Ջուլիան պառկում էր ծառերի ստվերում, կամ գնում էր կիտրոնենիների զով պուրակի խորքը: Մանկիկը վազվզում էր քիչ հեռվում՝ կենսախինդ փոքրիկ արարած:

Մի օր կինը նստած էր արևի տակ փոքրիկ ձորակի զառիթափ եզրին՝ լճակներից մեկում լողալուց հետո: Ներքևում, կիտրոնենիների տակ երեխան այս ու այն կողմ էր գնում վայրի թրթնջուկի դեղին ծաղիկների մեջ ու հավաքում էր թափված կիտրոնները: Փոքրիկի արևահար մարմինը մերթ լույսի մեջ էր հայտնվում, մերթ՝ ստվերում, ոտքից գլուխ բծավոր էր երևում:

Հանկարծ վերևում պայծառ լուսավորված կապույտ երկնքի ֆոնի վրա երևաց Մարինինան, սև գլխաշորով, և ձայն տվեց,- Սինյորա՜, սինյորա Ջուլիետա՜:

Ջուլիան կանգնեց ու շրջվեց: Մարինինան մի պահ կարկամեց՝ տեսնելով մերկ կնոջը ողջ հասակով կանգնած, գլխի շուրջը Արևից գունաթափված շեկ մազերի մի ամպիկ: Հետո արագաշարժ ծեր կինը իջավ զառիթափ կածանով:

Նա կանգ առավ մի քանի քայլի վրա, արևահար կնոջ առջև՝ դեմ դիմաց, դիտելով նրան գնահատանքով:

– Ի՜նչ գեղեցիկ եք,- ասաց նա հանդարտ, գրեթե ցինիկ տոնով:- Ձեր ամուսինն է եկել:

– Իմ ամուսինը՞,- հանկարծակիի եկավ Ջուլիան:

Տարեց կինը բազմանշանակ ժպտաց, ժպիտ, որ անցած դարերի կանանց համար հեգնանք էր նշանակում:

– Ի՞նչ է, ամուսին չունե՞ք,- ասաց նա ձեռ առնելով:

– Բայց ո՞ւր է նա,- բացականչեց Ջուլիան:

Տարեց կինը շրջվեց:

– Գալիս էր իմ հետևից: Երկի կածանը չի նկատել,- և նորից տարեց կինը բազմանշանակ ժպտաց:

Արահետները բոլորն այնքան դժվար նկատելի էին դարձել բարձր խոտի ու գույնզգույն ծաղիկների մեջ, որ նմանվել էին կենդանիների բացած կածանների միանգամայն վայրի տեղանքում: Տարօրինակ էր, քաղաքակրթության հին վայրերը բացահայտ վայրի տեղանքի էին վերածվել, վայրի, բայց ոչ մերկ ու անհրապույր:

Ջուլիան նայեց կնոջը մտախոհ հայացքով:

– Օհ, շատ լավ, թող գա,- ասաց նա վերջապես:

– Գա այստե՞ղ, հիմա՞,- հարցրեց Մարինինան, մինչ նրա ծիծաղ-կոտ, ծխագույն աչքերը ծաղրական մխրճվել էին Ջուլիայի աչքերի մեջ: Հետո թոթվեց ուսերը:

– Շատ լավ, ինչպես կամենաք: Նրա համար սա հազվագյուտ իրողություն է:

Նա բացեց բերանը՝ անձայն ծիծաղելով ուրախությունից: Հետո մատնացույց արեց փոքրիկին, որի գրկում մի քանի կիտրոն կար:

– Տեսեք, ինչ գեղեցիկ է փոքրիկը: Հաստատ ամուսնուդ դուր կգա, խեղճ մարդ: Այդ դեպքում ես նրան կբերեմ քեզ մոտ:

– Բե՛ր,- ասաց Ջուլիան:

Տարեց կինն արագ բարձրացավ կածանով: Մորիսը կանգնած էր՝ գորշ դեմքով, գորշ լայնեզր գլխարկը ձեռքին, գորշ կոստյումը հագին, մոլորված խաղողի որթատունկերի մեջ: Նա ակնհայտորեն չէր համա-պատասխանում այդ վայրին, այդ փառահեղ արևին ու հինավուրց հու-

նական աշխարհի շնորհներին: Նա ասես թանաքի բիծ լիներ արևի տակ շողացող լանջին:

– Եկե՛ք,- ասաց Մարինինան:- Ձէր կինն այստեղ է, ներքևում:

Եվ աղախինն արագ առաջնորդեց Ջուլիայի ամուսնուն, լայն քայլերով ճամփա բացելով խոտի միջով: Անսպասելիորեն Մարինինան կանգ առավ լանջի եզրին: Ներքևում երևում էին կիտրոնենիների ստվերները:

– Այստեղից իջե՛ք,- ասաց նա տղամարդուն, որը շնորհակալություն հայտնեց նրան՝ կտրուկ վեր նայելով:

Մորիսը մոտ քառասուն տարեկան էր, սափրված, գորշ դեմքով, ցածրախոս, ամաչկոտ: Նա ուներ բիզնես, որը վարում էր զգույշ, առանց ցնցող հաջողությունների, բայց արդյունավետ: Նա ոչ մեկին չէր վստահում: Տարեց կինը մի հայացքից տեսավ նրա էությունը՝ «լավ մարդ է», մտածեց նա,- «բայց տղամարդ չի, խեղճ մարդ»:

– Սինյորան ներքևում է,- ասաց Մարինինան:

Եվ կրկին տղամարդն ասաց, «Շնորհակալ եմ, շնորհակալ եմ», առանց որևէ հույզի և զգուշորեն քայլեց կածանով: Մարինինան բարձրացրեց գլուխը՝ զվարթ չարախնդությամբ: Հետո մեծ քայլերով ուղղվեց դեպի տուն:

Մորիսը քայլում էր զգուշորեն՝ հետևելով ամեն մի քայլին միջերկրական փարթամ բուսականության միջով, ուստի չէր տեսնում կնոջը, մինչև հասավ մի փոքրիկ կեռմանի, որի մոտ էր Ջուլիան: Վերջինս կանգնած էր ուղիղ, մերկ, դուրս ցցված ժայռաբեկորի մոտ, Արևից ու կենսասիրությունից շողարձակելով: Ստինքները առույգորեն բարձրացել էին, ասես ականջալուր, ազդրերը դարչնա-ոսկեգույն էին ու արագաշարժ:

Ջուլիան արագ, հպանցիկ հայացք նետեց ամուսնու վրա, որը հայտնվեց, ինչպես թանաքի բիծը՝ ծծանի վրա:

Խեղճ մարդը վարանեց, ապա հայացքը հեռացրեց կնոջից:

– Ողջույն, Ջուլիա,- ասաց նա, մի կողմ նայելով և նյարդային հազալով,- հոյակապ է, հոյակապ:

Նա մոտ գնաց առանց հայացքը կնոջ կողմն ուղղելու՝ մեկ-երկու անգամ գողունի նայելով Ջուլիային, մինչ վերջինս կանգնած էր՝ կրելով Արևի յուրատեսակ փայլն արևահար մաշկի վրա: Այդուհանդերձ կինն այնքան էլ մերկ չէր թվում: Նրան պարուրել էր Արևի պարգևած վարդաոսկեգույն թխությունը:

– Ողջույն, Մորիս,- ասաց նա՝ ընկրկելով:- Չէի սպասում, որ այսքան շուտ կգաս:

– Ես էլ չէի սպասում: Հաջողվեց մի քիչ շուտ ավարտել գործերս:

Եվ կրկին շփոթված հազաց:

Նրանք լուռ կանգնած էին իրարից որոշ հեռավորության վրա:

– Դե, հոյակապ է, հոյակապ: Դու հոյակապ ես: Որտե՞ղ է փոքրիկը:

– Այնտեղ է,- ասաց կինը՝ մատնացույց անելով այնտեղ, որտեղ ստվերում մի փոքրիկ մերկ մանկիկ թափված կիտրոններ էր իրար վրա դիզում:

Հայրը բռնազբոսիկ ծիծաղեց:

– Ա՜, այո, այնտեղ է, այնտեղ է մեր փոքրիկ տղամարդը: Հիանալի է,- ասաց նա:

Ամուսինն իսկապես հրճվանքի մեջ էր, նրա ճնշված փոքրիկ հոգին ցնծում էր: «Ողջո՜ւյն, Ջոնի», ձայն տվեց նա, բայց այդ ձայնն այնքան թույլ հնչեց:

Փոքրիկը վեր նայեց՝ ցաքուցրիվ անելով կիտրոնները փոքրիկ թմբլիկ թաթիկներով, բայց չպատասխանեց:

– Երևի, մենք իջնենք նրա մոտ,- ասաց Ջուլիան և, շրջվելով, հաստատուն խոշոր քայլերով ուղղվեց կածանն ի վար: Ամուսինը հետևեց կնոջը, նայելով, թե ինչպես են կնոջ վարդագույն շարժուն կոնքերը բարձրանում իջնում, իսկ կնոջ մարմինը բնիկի մեջ՝ գոտկատեղում, թեթևակի օրորվում էր:

Ամուսնու ուղեղը հիացմունքից, բայց և միաժամանակ անասելի կորստի զգացումից, մի պահ մթագնեց: Իսկ ինքը՞: Գորշ կոստյումով, գորշ գլխարկով, երկչոտ, գործարարին հատուկ մենակյացի դեմքով, ոչ մի կերպ չէր տեղավորվում այդ պատկերում:

– Լավ տեսք ունի, չէ՞,- ասաց կինը, երբ նրանք դուրս եկան կիտրոնենիների տակ աճած վայրի թրթնջուկի դեղին ծաղիկների ծովից:

– Այո, այո, հոյակապ, հոյակապ: Ողջույն, Ջոնի: Հայրիկին չե՞ս մոռացել, հը՞: Հիշո՞ւմ ես հայրիկին, Ջոնի:

Հայրը կռացավ և առաջ պարզեց ձեռքերը:

– Կիտրոն,- ճռվողեց մանկիկը,- երկու կիտրոն:

Նա մոտեցավ և հոր ամեն մի ափի մեջ մեկ կիտրոն դրեց, հետո մի քիչ հեռացավ որ դիտի:

– Երկու կիտրոն,- կրկնեց հայրը,- արի, Ջոնի, մոտ արի և հայրիկին ասա «բարև»:

– Հայրիկը գնա՞,- ասաց փոքրիկը:

– Կգնա, բայց, դե, ոչ այսօր:

Եվ հայրը գրկեց փոքրիկին:

– Հանե՛լ բաճկոն, հայրիկ, հանե՛լ բաճկոն,- ասաց փոքրիկը, գործվածքի շփումից ընկրկած, ջանալով դուրս գալ հոր գրկից:

– Լավ, տղաս: Հայրիկը կհանի բաճկոնը:

Նա հանեց բաճկոնը և զգույշ մի կողմ դրեց, հետո նորից գրկեց փոքրիկին: Մերկ կինը նայում էր մերկ փոքրիկին վերնաշապիկ հագած ամուսնու գրկում: Փոքրիկը վերցրել էր գլխարկը հոր գլխից: Կինը նայեց ամուսնու խնամքով սանրված այեխառն մազերին, ոչ մի մազ չէր խառնվել: Եվ բացարձակապես չէր սազում լայնարձակ բնությանը, պարզապես փակ տարածքում էր ամուսինը: Մայրը երկար ժամանակ լուռ էր, մինչ հայրը գրուցում էր փոքրիկի հետ, որը շատ էր կապված հոր հետ:

– Ի՞նչ ես անելու, Մորիս,- հանկարծ հարցրեց կինը: Ամուսինն արագ հայացք նետեց կնոջ վրա:

– Ի՞նչ ես ուզում ասել:

– Ամեն ինչ: Այս իրավիճակում: Ես չեմ կարող վերադառնալ արևելյան 47-րդ փողոցը:

– Դե,- վարանեց ամուսինը,- ոչ, կարծում եմ, գոնե ոչ հենց հիմա:

– Երբեք,- ասաց կինը. լռություն տիրեց:

– Դե, չգիտեմ,- ասաց ամուսինը:

– Կարծում ես, կարո՞ղ ես գալ այստեղ,- հարցրեց կինը:

– Այո, կարող եմ մնալ մեկ ամիս, երևի, կկարողանամ,- մի փոքր տատանվելով՝ պատասխանեց ամուսինը:

Հետո երկչոտ, գողունի հայացք նետեց կնոջ ուղղությամբ ու կրկին շրջեց դեմքը:

Կինը դիտում էր կռացած ամուսնուն վերևից, մինչ ստինքները թեթևակի բարձրացան կնոջ հոգոցից, ասես անհամբերություն անցավ նրանց վրայով զեփյուռի նման:

– Ես չեմ կարող վերադառնալ,- դանդաղ ասաց կինը:

– Ես չեմ կարող դավաճանել Արևին: Եթե չես կարող գալ...

Կինը չավարտեց միտքը: Ամուսինը կրկին ու կրկին նայեց կնոջը, նայեց գողունի, բայց հարաճուն հիացմունքով և նվազող շփոթմունքով:

– Ոչ, այս մթնոլորտը քեզ վրա լավ է ազդում: Դու հոյակապ ես: Չեմ կարծում, թե կարող ես ետ գալ:

Ամուսինը մտովի տեսավ կնոջը Նյու Յորքի բնակարանում, գունատ, լռակյաց, ահավոր ճնշված: Ամուսինը մինչև ուղն ու ծուծը երկչոտ մեղմություն էր մարդկային հարաբերությունների հարցում, և կնոջ լուռ, անտանելի թշնամանքը երեխայի ծնվելուց հետո խորապես վհատեցրել էր նրան, քանզի հասկացել էր, որ կինը չէր կարող այդպես չվարվել:

Այդպիսին են կանայք: Նրանց հույզերը կարող են շրջվել հակառակ ուղղությամբ, նույնիսկ ուղղվել հենց իրենց դեմ, իսկ դա ահավոր էր, ահավոր: Ահավոր էր, ահավոր ապրել մի տան մեջ այդպիսի կնոջ հետ, որի հույզերը շրջվում էին իր իսկ դեմ: Կնոջ անսահման թշնամանքը հսկա ջրաղացքարի պես ճզմում էր ամուսնուն: Կինն անգամ ինքն իրեն էր ճզմում, նույնիսկ երեխային: Ինչին ասես համաձայն էր, միայն ոչ այդ իրավիճակին:

– Բայց դու ինչե՞ս անելու,- հարցրեց կինը:

– Ե՞ս, դե, ես, ես կարող եմ շարունակել գործս, և գալ այստեղ արձակուրդի ժամանակ, քանի դեռ այստեղ լինես: Մնա՛ այստեղ, ինչքան ուզում ես:

Ամուսինը երկար ժամանակ հայացքը հառել էր գետնին, հետո արագ շրջեց կնոջ կողմը, նրա անհանգիստ աչքերում աղերսանք կար:

– Նույնիսկ մի՞շտ:

– Դե, ը՞մ, այո, եթե ցանկանում ես: Միշտը շատ երկար ժամանակ է, հնարավոր չէ ժամկետ սահմանել:

– Եվ ես կարո՞ղ եմ անել, ինչ ցանկանամ,- կինը նայեց ուղիղ ամուսնու աչքերի մեջ, և նրա ձայնում մարտահրավեր հնչեց: Ամուսինն անզոր էր նրա վարդագույն քամահարված մերկության դեմ:

– Դե, այո, կարծում եմ, կարող ես: Այնքան ժամանակ, քանի դեռ չես վշտացնի ինքդ քեզ կամ փոքրիկին:

Ամուսինը կրկին հառեց աչքերը կնոջ վրա խառնիխուռն, անհանգիստ աղերսանքով՝ մտահոգվելով երեխայի մասին, բայց հուսալով իր համար:

– Խոստանում եմ,- վրա բերեց կինը:

– Ոչ, ոչ,- ասաց Մորիսը:- կարծում եմ, որ խոստումդ կկատարես:

Լռություն տիրեց: Գյուղի զանգերն իրարից առաջ ընկնելով, ազդարարում էին, որ կեսօր էր: Ճաշի ժամն էր:

Կինը վրան նետեց գորշ մետաքսե կիմոնոն և որպես գոտի կապեց լայն կանաչ ժապավեն: Հետո փոքրիկի մարմնի վրա կապույտ շապիկ սահեցրեց, և բոլորը միասին քայլեցին տան ուղղությամբ:

Ճաշի ժամին կինը դիտում էր ամուսնուն, նրա գորշ քաղաքային դեմքը, ալեխառն հարդարված մազերը, զուսպ շարժուձևը սեղանի մոտ և նրա անսահման չափավորությունը խմիչքի և սննդի հարցում: Երբեմն Մորիսը գողունի հայացք էր նետում կնոջ վրա՝ նայելով սև արտևանունքների միջով: Նրա գորշ-ոսկեգույն աչքերը նման էին այն կենդանու աչքերին, որին գերել էին երիտասարդ հասակում և մեծացրել կատարյալ անազատության մեջ:

Նրանք դուրս եկան պատշգամբ՝ սուրճ խմելու: Ներքևում, հեռվում, փոքրիկ ծորակից անդին, հարևան ագարակում, նշենու տակ նստած էին մի գեղջուկ և մի գեղջկուհի, կանաչ ցորենի դաշտի հարևանությամբ, և վայելում էին կեսօրյա կերակուրը, որը դրված էր գետնին փռված սպիտակ անձեռոցիկի վրա. մի մեծ կտոր հաց, և բաժակներում մուգ կարմիր գինի:

Ջուլիան ամուսնուն նստեցրեց այնպես, որ նա չտեսներ այս պատկերը, իսկ ինքը լուռ դիտում էր: Հենց որ մարդ ու կին դուրս եկան պատշգամբ, գեղջուկը նայեց նրանց ուղղությամբ:

5.

Կինը ճանաչում էր գեղջուկին, հեռվից, բայց կատարելապես: Գեղջուկը բավականին գեր էր, թիկնեղ, մոտ 35 տարեկան, և ծամում էր հացը խոշոր կտորներով: Նրանք երեխաներ չունեին: Այսքանը գիտեր Ջուլիետը:

Գեղջուկը շատ էր աշխատում, մենակ, դիմացի հողամասում: Նրա հագուստը միշտ մաքուր էր, կոկիկ՝ սպիտակ տաբատ, գունավոր վերնաշապիկ և հին ծղոտե լայնեզր գլխարկ: Թե՛ գեղջուկի, թե՛ նրա կնոջ պահվածքում նկատվում էր այն հանդարտ գերադասությունը, որը հատուկ է անհատականություններին և ոչ թե տվյալ խավին:

Գեղջուկի գրավչությունը նրա կենսասիրությունն էր, այն յուրատեսակ աշխույժ եռանդը, որ հմայք էր հաղորդում նրա շարժումներին, թեև նա գեր էր ու թիկնեղ: Ավելի վաղ, նախքան Արևին հանձնվելը, Ջուլիան անսպասելիորեն հանդիպել էր գեղջուկին, երբ քարերի վրայով մագլցել-հասել էր հարևան հողատարածքը: Գեղջուկն ավելի շուտ էր նկատել նրան, և երբ Ջուլիան, հայացքը բարձրացնելով, տեսել էր նրան, նա հանել էր գլխարկը՝ նայելով նրան իր խոշոր կապույտ աչքերով, որոնցում միախառնված էին հպարտությունն ու ամաչկոտությունը: Նրա դեմքը լայն էր, արևախանձ, շագանակագույն ընչացքը հարդարված էր, իսկ շագանակագույն, գրեթե ընչացքի նման խիտ հոնքերն իրար էին միանում լայն ճակատի ներքևում:

– Կարելի՞ է այստեղ գբոսնել:

– Իհարկե,- պատասխանեց գեղջուկն իրեն հատուկ եռանդուն փութաջանությամբ:

– Իմ պարոնը դեմ չէ, որ դուք գբոսնեք իր կալվածքում:

Եվ գլուխը բարձրացրեց իրեն հատուկ եռանդուն, ակնհայտ ու միաժամանակ ամաչկոտ մեծահոգությամբ: Կինն արագ շարունակել էր

ճանապարհը՝ մի ակնթարթում նկատելով գեղջուկի երակներում հոսող արյան բուռն մեծահոգությունը և նույնքան բուռն ամաչկոտությունը:

Այդ օրվանից ի վեր կինը տեսնում էր նրան հեռվում ամեն օր և աստիճանաբար հասկացավ, որ գեղջուկն ավելի շատ ապրում էր ինքն իր համար, աշխույժ կենդանու նման, և որ նրա կինը սիրում էր նրան այնպիսի մի խանդոտ սիրով, որը մոտ էր ատելությանը, քանի որ գեղջուկը հավանաբար ուզում էր տալ ավելին, քան կինը կարողանում էր ընդունել:

Մի օր, երբ ծառի տակ մի խումբ գյուղացիներ էին նստած, Ջուլիան տեսավ, որ գեղջուկն արագ ու զվարթ պար էր բռնել մի երեխայի հետ, իսկ կինն ինքնամփոփ ու անբարյացակամ, դիտում էր:

Աստիճանաբար գեղջուկն ու կինը մտերմացան հեռավորության վրա: Նրանք զգում էին միմյանց ներկայությունը: Կինը գիտեր, թե որ պահին էր գեղջուկն անցնում էշով: Եվ հենց այն պահին, երբ կինը պատշգամբ էր դուրս գալիս, գեղջուկը շրջվում էր ու նայում: Բայց նրանք երբեք չէին բարևում միմյանց: Այդուհանդերձ կինը կարոտում էր նրան, երբ նա չէր գալիս հողամասում աշխատելու:

Մի շոգ առավոտ, երբ նա մերկ գբոսնում էր երկու կալվածքները բաժանող խոր ձորակում, նրանք դեմ-հանդիման դուրս եկան այն պահին, երբ գեղջուկը՝ լայն ուսերը կռացրած, ցախ էր հավաքում՝ անշարժ կանգնած էշի վրա բարձելու համար: Երբ գեղջուկը բարձրացրեց կարմրած դեմքը և տեսավ կնոջը, վերջինս ետ-ետ գնաց: Գեղջուկի աչքերում բոց հայտնվեց, կնոջ մարմնում էլ բոց բռնկվեց, որն ասես հալեցրեց նրա ոսկորները: Սակայն կինը լուռ անցավ թփերի ետևը և հետ գնաց այնտեղ, որտեղից եկել էր: Ջուլիետը մտածում էր, թեև մի փոքր բարկացած, այն լռության մասին, որով աշխատում էր գեղջուկը թփուտներում: Վերջինիս հատուկ էր վայրի կենդանու այդ ունակությունը:

Այդ օրվանից նրանց երկուսի մարմիններում ծնվեց գիտակցության մի ցավ, թեև նրանցից ոչ մեկը չէր խոստովանում, ոչ մի կերպ ի ցույց չէր հանում: Բայց գեղջուկի կինը բնազդաբար հասկանում էր:

Իսկ Ջուլիան մտածում էր. ինչո՞ւ մի ժամով չհանդիպեմ այս մարդու հետ և չկրեմ նրա երեխային: Ինչո՞ւ պետք է կյանքս կապեմ մեկ տղամարդու հետ: Ինչո՞ւ մի ժամով չհանդիպեմ նրան, քանի դեռ ցանկություն կա, և ոչ ավել ոչ պակաս: Մեր միջև արդեն կայծ է բռնկվել:

Սակայն նա ոչ մի քայլ չարեց այդ ուղղությամբ:

Եվ հիմա տեսնում էր, որ գեղջուկն իրենց կողմն է նայում՝ սպիտակ սփռոցի կողքին նստած, իսկ նրա սևազգեստ կինը նստած էր նրա

դիմաց: Գեղջուկը Մորիսին էր նայում: Ամուսնու հայացքին հետևելով՝ գեղջուկի կինը շրջվեց և նայեց իրենց ուղղությամբ:

Ջուլիան հանկարծ համակվեց չկամությամբ ու նախանձով: Նորից ստիպված կլինի Մորիսի երեխային կրել կրծքի տակ: Նա տեսավ դա ամուսնու աչքերում և լսեց նրա պատասխանի մեջ:

– Կզբոսնե՞ս Արևի տակ առանց հագուստի, մերկ:

– Ե՞ս, ոմ, այո: Կուզենայի, քանի դեռ այստեղ եմ: Կարծում եմ, ոչ ոք չի՞ տեսնի:

Ամուսնու աչքերում ինչ-որ շող հայտնվեց, նրա ցանկությունը հուսահատ քաջություն հաղորդեց նրան, և նրա հայացքը նորից սահեց խալաթի տակ թաքնված ստինքների վրայով: Այս առումով նա տղամարդ էր, այս աշխարհից, և նրա առնական ցանկությունը բավարարում էր տենչում: Նա նույնիսկ պատրաստ էր արևի տակ մերկ զբոսնել, նույնիսկ, եթե ծիծաղի առարկա դառնար:

Բայց ամուսնու մեջ այս աշխարհի շունչն էր զգացվում, այս աշխարհի կապանքների շունչը և կենդանական վախի շունչը: Նրա վրա այս աշխարհի դրոշմն էր, որը հարգադրոշմ չէր:

Հասունացած, ոտքից գլուխ Արևից վարդա-շագանակագույն դարձած, ընկած վարդի նմանվող սրտով, կինն ուզում էր գնալ այդ ամաչկոտ, բայց տաքարյուն գեղջուկի մոտ և կրել նրա երեխային: Կնոջ հույզերը ծաղկաթերթիկների պես թափվեցին: Նա տեսել էր ջերմ ավյունը այդ գեղջուկի արևախանձ դեմքին, տեսել էր բոցը նրա՝ հարավցու, կապույտ աչքերում, և դրան ի պատասխան կնոջ մեջ հրդեհ էր բռնկվել: Գեղջուկն արարիչ արևալոգանք կլիներ կնոջ համար, և կինը տենչում էր, որ այդպես լիներ:

Այնուամենայնիվ, կնոջ երկրորդ երեխան Մորիսինն էր լինելու: Ճակատագրի անկասելի շղթայի արդյունքն էր լինելու այդ երեխան:

Անգլերենից թարգմանեց
[illegible]